ՆՈՐ-ԴԱՐ

№ 21 ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 6 Փետրուարի 1892 Հինգշաբթի, 6 Փետրուարի ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 21

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կոպէկ։
Ժամանդը դրւում են Թիֆլիսում՝ մի հասցեի խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Redaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9 ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բաժին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ
ԹԻՖԼԻՍՈՒՄ

ՆԵՐԿԱՅ 1892 ԹՈՒԱԿԱՆԻՆ
(Իններորդ տարի)

Հրատարակւում է նոյն չէրեով և ծրագրով ամեն օր՝ բացի կիրակի, երկու-շաբթի և տոներին հետևող օրերից։

ԹՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍՏԱՆՈՒՄ Է ԵՒ ՍԵՊՀԱԿԱՆ ՀԱՒԱՏԻՐՆԵՐ

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով 5 կ.
ԵՒՐՈՊԱՅԻ, ԹԻՒՐՔԻԱՅԻ, ԱՄԵՐԻԿԱՅԻ, և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։
Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։
ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ բաժանորդ են գրւում ինչպէս «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը։
Խմբագրատունը գտնւում է Պաշկինսկայա փողոցում, Սկուերի դիմաց, Տէր Աւետարանի տանը № 14., մուտքը բակից։
Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

ԿԱՏԱՐԻՆԷ ԱԻԵՏԻՍԵԱՆ, ԳՐԻԳՈՐ ԵՒ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԷՈՐԳԵԱՆ ՄԻԱՑԵԼ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՓՐԻԴՈՆԵԱՆՆԵՐԸ, ՍԱԼՈՄԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԹԱՄԱՄՇԵԱՆԸ ԵՒ ՎԱՐՎԱՌԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ յատուկ որոշ յայտնում են առաջինն՝ ամուսնու, երկրորդները՝ հօր և վերջիններն իրենց եղբօր

ԵԳՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՓՐԻԴՈՆԵԱՆԻ

մահը, որ վրայ հասաւ Թիֆլիսում, փետրուարի 2-ին։ Յուղեհանդիսաը կը լինի երեքշաբթի և չորեքշաբթի փետրուարի 4-ին և 5-ին, երեկոյեան ժամը 6-ին Հանգուցեալի բնակարանում, Սերգիևսկայա փողոց, սեպհական տունն։

Թաղման հանդէսը տեղի կունենայ հինգշաբթի, փետրուարի 6 ին, առաւօտեան ժամը 10-ին, սեպհական անից դէպի Նորաշէնի եկեղեցին։ Մարմինը կամփոխւի նոյն եկեղեցու գաւթում։
(278) 3—3,

ԹԻՖ· ԱՐՔ· ԹԱՏ·

Հինգշաբթի, փետրուարի 6-ին հայ դերասանական մշտական, խումբը կը ներկայացնէ
Երկրորդ անգամ
ՕՐԼԻԱՆԻ ԿՈՅՍԸ
Դրամա 5 արար., հեղ. Շիլլերի, թարգ. Բարխուդարեանցի։
Կը մասնակցէ ամբողջ խումբը։
Սկիզբը է ժամը 7½-ին.
(280) 2—2.

Կիրակի, փետրուարի 9-ին
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ
տեղի կունենայ
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ օգտին։
Սկիզբն ընթերցման ժամը 7½-ին.
(279) 3—2.

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Փետրուարի 2-ի ընտրութիւնների առիթով։

Քրոնիկոն. — Կաթողիկոսական խնդիրը Կ. Պոլսում։ Թիֆլիսի թեմի պատգամաւորութեան մուշտարիները։ Թիֆ. կոնսիստորիայի երկու անդամների վերստին պաշտօնի կոչուիլը։ Խմբագրութեան կողմից «Արմաան» վէպ։ Մոսկուայից։ Նշմարանելոց։ Շուշուց։ Ախալքալաքից։ Ղազախից։ Ղազախից։

Վերջին ընտրութիւնները։ † Գէորգ Փրկոնեան։

Թղթակցութիւններ. — Ախալքալաք։

Քաղաքական. — Անգլիա։ Գերմանիա։ Իտալիա։

Հեռագրեր։

Բանասիրական. — Քարանձաւային արձանագրութիւնը։

Տեղեկատու

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 5 փետրուարի, 1892 թ.

ՓԵՏՐՈՒԱՐԻ 2-Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒ

—

Հակառակ անցած, հին, խաւար ժամանակներին մենք, այնպէս էինք հաւատացած, որ այժմ համեմատաբար ճշմարտութիւնը ամենի դիւրութեամբ է յայտնւում, որ պարբերական մամուլի չնորհիւ ճշմարտութիւնը թագցնելը դժուար է, որ ստութիւնը ճշմարտութեան հետ մրցելով յաղթահարում է և պիտի յաղթահարի։

Դժբաղդաբար մեր տեղական մամուլի մի մասը մեծ առաջադիմութիւն է ցոյց տալիս ճշմարտութիւնը թագցնելու գործում։

Մեր մամուլի մի մասի այդ պատաստութիւնը ամենի երևում է մեր եկեղեցիներում կատարուած ընտրութիւնների վերաբերութեամբ։

Մեր տեղական մամուլի մի մասը կամ լռութիւն է պահպանում այդ մասին կամ գաղափարում է այն եկեղեցիների ընտրութիւնները, որոնց մասին կարելի է հաստատապէս ասել, որ ամենի գիտակցութեամբ է կատարուել և առանց զեղծումների, բայց գովում ու փառաբանում է Հալվաթարի եկեղեցիների ընտրութիւնները, որոնք կատարուած են բռնութիւնների, և բազմաթիւ զեղծումների միջոցով։

Նախ իմանանք թէ եկեղեցիներում քանի ընտրութիւններ պիտի կատարուէին։ Եկեղեցիներում ծուխերը կոչուած էին ընտրելու ծրխական պատգամաւորներ։ Այդ ծրխական պատգամաւորները իրենց կողմից մարտի 8-ին Թիֆլիսում պիտի ժողովուեն, ուր կը հաւաքուին և թեմիս միւս քաղաքների պատգամաւորները, և ընտրեն մի թեմական պատգամաւոր։

Այդ այդ թեմական պատգամաւորի ընտրութիւնով պիտի յայտնուի թէ Թիֆլիսի թեմը իւր ըբնակիչների մեծամասնութեամբ, որ եպիսկոպոսին է ուզում կաթողիկոս տեսնել։

Պարզ է, որ Թիֆլիսի եկեղեցիներում կատարուած կամ կատարուելիք ընտրութիւնները միմիայն այն ժամանակը նշանակութիւն ունեն, երբ այդ ընտրութիւնների հետևանքներից կերևայ թէ Թիֆլիսի թեմը իւր մեծամասնութեամբ և թէ իւր փոքրամասնութեամբ որ կաթողիկոսական թեկնածուի կողմն է։

Որպէս զի այդ յայտնուի և աշխարհն իմանայ Թիֆլիսի թեմի որամադրութիւնը ընտրութիւնների միջոցով, պէտք է որ ընտրութիւնները ազատ լինին ճնշումներից, պէտք է որ ընտրութեանը մասնակցողները անկախ մարդիկ լինին, գրագէտ լինին հասկացող մարդիկ լինին, պէտք է որ ընտրութիւնները կարգին լինին և ուշած հրահանգի համաձայն պէտք է որ իւրաքանչիւր եկեղեցու ծուխը և միմիայն ծուխը ինքը ազատօրէն կատարէ ընտրութիւնը։

Հալվաթարի եկեղեցիներում, կարելի է հաստատապէս ասել, որ փետրուարի 2-ի ընտրութիւնների ժամանակ վերը յիշած պայմաններից և ոչ մէկը չէ կատարուել։ Մենք դէմ չենք, որ ընտրութիւնների համար կանխօրէն աֆիշապոչիա է լինում, դէմ չենք, որ մի որոշ խմբակ չորս ամիս է ահա, որ կանոնաւորապէս աշխատում է ընտրութիւնների համար թէ Թիֆլիսում և թէ թեմի միւս քաղաքներում, դէմ չենք, որ այդ խմբակը իւր ընտրելիի գործը աշխատում է առաջ տանել և միամիտ ժողովրդի միտքը աշխատում է գրաւել իւր կողմը, դէմ չենք մինչև անգամ, որ նախանխօրէն գրած կամ տպած եկեղեցական պատգամաւորների անուանացուցակ է պատրաստում գանազան եկեղեցիների համար և ամեն տեղ տարածում— եթէ ընտրութիւններ լինում են, իւրաքանչիւր կուսակցութիւն աշխատում է և պէտք է աշխատէ մտքերը իւր կողմը գրաւել և իւր նպատակի համեմատ ընտրելիներ առաջարկել։

Մինչև այդպէս մենք դէմ չենք վերը յիշած խմբակի գործունէութեանը, բայց դրանից դէնը դէմ ենք նրա գործունէութեան և այն ամեն անկարգութիւններին, ճնշումներին, զեղծումներին, որ կատարուել են Հալվաթարի եկեղեցիներում։

Ամենախաղաղ և կանոնաւոր ընտրութեան դէպքումն էլ Հալվաթարի մի որ և է եկեղեցում կարելի է այնպէս անել, որ ընտրութեան հետևանքից մենք չենք կարող ասել թէ այդ եկեղեցու ծուխը գիտակցութեամբ մի գործ է կատարել, որով յայտնւում լինէր նրա որամադրութիւնը։

Ամենականոնաւոր և խաղաղ ընտրութիւն պէտք է համարել այն դէպքում, երբ, օրինակ, մի եկեղեցու ծուխ թուով հարիւր հոգի հաւաքւում են և իրենց նախագահ քահանայի գլխավորութեամբ ս. Առաջնորդի տուած հրահանգի համեմատ ընտրում են մի պատգամաւոր, որ ասացել է, դիցուք, հարիւր ձայնից եօթանասունը, որ ստուար մեծամասնութիւն է կազմում։

Ըստ երևոյթին ամեն բան կարգին է, բայց եկէք և տեսէք, որ հարիւր հոգուց միմիայն երեսունն էին գրագէտ և հասկացող մարդիկ, մնացած եօթանասուն հոգին մասամբ անգրագէտ, խեղճ գոսին է պատկանում, մասամբ էլ կոյր, առանց մի որ և է որոշ գրաւմունքի մարդիկ են և դրանց ամենին բերել է եկեղեցի ճարպիկ մէկը՝ գանազան խոստումներով և միջոցներով. այնպէս որ ամենքը կուրօրէն հետևում են այդ մէկ ճարպիկի պատուէրին և իրենց ձայնը տալիս են ստացած պատուէրի համեմատ — հարցնում ենք, այդ տեսակ ընտրութիւնների հետևանքից կարելի է իմանալ թէ Թիֆլիսի թեմի հասկացող, ողջամիտ ժողովրդի որամադրութիւնը կաթոլիկոսական ընտրելիի վերաբերութեամբ։

Կարծում ենք որ կարելի չէ։

Եթէ այդ տեսակ կանոնաւոր և խաղաղ ընտրութեան ժամանակ էլ շատ անգամ կարելի չի լինում իմանալ ժողովրդի բուն որամադրութիւնը, հապա ինչ ասենք Հալվաթարի ընտրութիւնների մասին, ուր վերը յիշած խմբակը Կաւկիայի և Զուղուրէթի եկեղեցիներում կորցնելով ոտքի տակի հողը և զօրաւոր դիմադրութիւն գտնելով այդ եկեղեցիների հասկացող և աչալուրջ ծրխականներից իրենց բոլոր ոյժերը հաւաքել էին Հալվաթարի եկեղեցիներում։ Այդ խմբակի մէջ շատերը, (որոնց անուանները հարկը պահանջած ժամանակ կը հրատարակենք) Հալվաթարի ոչ մի եկեղեցու ոչ ծուխ և ոչ ժամաւոր լինելով, պաշարել էին այդ եկեղեցիները տանելո՛ւ իրենց հետ լոյժամուժ ամբոխին պատկանող անգրագէտ, անչափահաս և դռեհիկ մարդիկ, որոնք բռնանում էին ընտրութիւնների վրայ և պատուաւոր ծխականներին քշում եկեղեցիներից։

Եթէ քննութիւն բացուի, այն ժամանակ կը յայտնուի թէ որոնք են այն մարդիկը, որ ընտրութիւնների վրայ են բռնացել, կը յայտնուի, որ ընտրութիւնների ժամանակ ծխականների ցուցակը չէ կարդացուել, որ ընտրութեանը մասնակցել են ոչ ծխականներ, անչափահասներ, որ անգրագէտների տեղը թերթիկների վրայ անուններ գրողները եղել են ոչ ծխականներ, այնպիսի մարդիկ, որ իրենք են ընտրուել ուրեմն իրենք իրենց անունն են գրել և այնպիսի մարդիկ, որ քահանան նրանց ծուխ չէ ճանաչել և նրանք այդ քահանայի ցուցակում չը կան նշանակուած, այլ ուրիշ քահանայի ծուխ լինելով վերը յիշած խմբակի կարգադրութեամբ մտել և գործում են ընտրութեան համար։ Աֆիշապոչիա անել կարելի է, բայց անգրագէտ ամբոխից մարդիկ հաւաքել և գնալ իւրաքանչիւր եկեղեցի, որտեղ ընտրութիւն է կատարւում, պաշարել և բռնանալ ընտրու-

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

ԳՈՎՎԱՍԱՏԱՆԻ.

(Ռոսթոմ յիշատակութիւն)*)

Ս.

ՈՐՈՏՈՒՄՆ ԱՂԲԻՒՐԻ.

IX.

Ասկէ ետքը բարեկամ գտնուեցաւ էր Ղարսէրուան ինքնագլուխ եւ ամբարտաւան մէկուսի, որ ոչ միայն ինքը չէր ուզեր Ռոսթոմի հետ հաշտիլ, այլ եւ ուրիշներն ալ կ՚արգիլէր։ Ասոր համար Ռոսթոմ ստիպուեցաւ ինքնին երթալ անոր մօտ, եւ ինչպէս որ ինքը կ՚ուզէր, այնպէս ալ ըրաւ։ Ղարսէրուան ոչ միայն ընդունեց զինքը պատուով, այլ եւ ամէն կերպով ցոյց տուաւ թէ ինքն ալ կ՚ուզէ հաշտութիւն ընել։ Ռոսթոմ ալ ուրախ եղաւ, որ ինքն ալ ամէն կերպով կ՚ուզէր հաշտիլ Ղարսէրուանի հետ։ Ղարսէրուան ուրախ եղաւ, որ Ռոսթոմ ինքն եկաւ իր մօտ, եւ ինքն ալ ամէն կերպով կ՚ուզէր հաշտիլ Ռոսթոմ

զուր տեղ չը սպասել տալ հաւաքուած ժողովրդին։

Կիրակի օր կատարուած ընտրութիւնները, առհասարակ, շատ աջող կարելի է համարել։ Ժողովուրդն ինքն, գիտակցաբար էր ընտրում, հասկանում էր թէ ումն էր ընտրում։ Մենք լսում ենք այն եկեղեցիների մասին, օրինակ Կուկիայի և Զուղուբէթի եկեղեցիների մասին, որտեղ Ճչմարիտ Ճուխ կար, ժողովուրդ կար։

Իսկ այնպիսի եկեղեցիներում, որտեղ Ճուխը շատ աննշան թուով է ներկայացել, ինչպէս Հաւլաբարի մի քանի եկեղեցիներում, պարզ է, որ մեծ մասամբ անգրագէտ մարդկանցից բաղկացած Ճուխը և այլ եկեղեցիներից խմբուած բազմութիւնը նոյն գիտակցութեամբ չէր կարող կատարել ընտրութիւնները, ինչպէս այդ նոյն ընտրութիւնները կատարեց Կուկիայի և Զուղուբէթի բուն հայոց խիտ ազգաբնակութիւնը։

Այդպիսով յունուարի 26-ին Զրկինենց և վերայի չընտրուած մարդիկ կարողացան փետրուարի 2-ին ընտրուել Ս. Կարապետ և Էջմիածնեցոց եկեղեցիներում։

(«Արձագանգ»)

---

† ԳԷՈՐԳ ՓՐԻՒՈՆԵԱՆ

—

Այսօր թաղում են հանգուցեալ Գէորգ Փրիւոնեանին։

Ո՛վ է հանգուցեալը։ Բնիկ Թիֆլիսեցի, քաղաքիս հին առևտրի, իսկական հայի տիպ Գէորգ Փրիւոնեանը ծնուել է սրանից 74 տարի առաջ, սկզբնական ուսումն առել է հին վարժարանների մօտ, և այնուհետև Ռուսիա գնալով մտել է վաճառականութեան մէջ և շուտին իւր վերջն անցրել է իւր կեանքը վաճառականութեամբ և կապալառութեամբ։ Հանգուցեալը 12 տարեկանից մինչև 74 տարին միշտ աշխատութեան մէջն է եղել, վաճառական Ճուխներին նա աչքի էր բնկնում հասարակական գործունէութեան մէջ ինչպէս անգամ զանազան վաճառականական պատրանքն, քաղաքային վարչութեան և այլն։

1862-ից մինչև 1865 նա եղել է Թիֆլիսի քաղաքագլուխ ընտրուած միաձայն քաղաքի բնակիչներից և իւր այդ կարճաժամ պաշտօնավարութեամբ քաղաքի օգտին շատ գործեր է կատարել իւր հետաքրքրութեան և ուշիմութեան չնորհիւ։ Նա էր, որ առաջին անգամ ուշք դարձրեց ումն հարկն էր, Թէ Թիֆլիսը Ճախճախով ամեն տարի նշանաւոր գումար Ճատրոնի վրայ, պահում էր Ճատրական ապերային նեկայացումները, ժողովրդին անհասկանալի, այն ինչ օգտաւէտ է համարում որ տեղական լեզուներով լինին ներկայացումները։ Նա էր որ սկզբնական գաղափար տուաւ Թիֆլիսի արհեստաւորաց ուսումնարանին, նա էր որ համեմատաբար չնչին գնով քաղաքի համար Ճեռք բերեց այն երևելի տունը և տեղը, որ այժմս Նորոգուած քաղաքային տուն է կոչուում։

Հանգուցեալ Մատթէոս կաթողիկոսին նա ինչպէս քաղաքագլուխ ողջունեց իւր ընտրութիւնը և բարեյաջող Թիֆլիս ժամանելը. և Թիֆլիսի հիւրընկալութեան տանուտէրի դեր խաղացող առ. վեհն հանգուցեալ։

Այնուհետև կրկին Թիֆլիսի քաղաքագլուխ ընտրուելուց հրաժարուելով մնաց հասարակութեան և տեղական գործերին մասնակցելով և ի սրտէ համակրելով կամաց կամաց հետանում է հասարակական ասպարէզից և իրեն նուիրում իւր մասնաւոր գործերին և իւր ՃեռնարկութեանՃ մէջ իւր աջողութիւնն է գտնում իւր հետաքրքրութեամբ և աչալրջութեամբ. հարուստ վողով և աւելի հարուստ սրտով հանգուցեալը առանձնապէս իրեն նուիրում է իւր զաւակների դաստիարակութեան գործին՝ նրանց բարի մարդ և լաւ հայ պատրաստելու վրայ և իւր կարողութեան հետ նոյնց իրրև առանդ Թողնում է բարի և իսկական հայ անունը։ Հանգուցեալը սիրում էր Թիֆլիսը, սիրում էր անկեղծ իւր հայրենակիցներին և իւր ազգն։ Վերջին ժամանակները մեզ ցաւօք էր տես նում որ հայն և վրացին միմեանցից բաժանուում կուսակցութիւն էին կազմում Նա ասում էր «իմ ժամանակ այդպէս չէինք երկուս էլ «երջանիկ էինք», նա ցաւում էր և լսելն անգամ վիշտ էր Նրա համար, որ մեր Թիֆլիսում մինչև անգամ հայերը մի քանի կուսակցութիւնների էին բաժանուած և մէկ գնկու ոանակովս անել են աշխատում և ցաւում էր մեզ, որ նորեկ հայերը Թիֆլիսցիների մէջ խառնուածքի և երկպառակութեանց որոմն են սերմանում և հայոց հին նահապետական պարզ և մաքուր քնաւորական յարաբերութիւնները ու սովորութիւնները կամաց կամաց ոանանակ են լինում. առաջ ասում էր Նա Թէ և չատերը «բաւ հայերէն չ'գիտէին, բայց նրանք աւելի սրտով լաւ հայեր են, սիրում էին իրենց ազգն ու եկեղեցին և սրտացաւ էին մեզ ոչ միայն նիւթական այլ և անձնական զոհաբերութիւններ անելու իրենց ազգին ու եկեղեցին անփոփոխ պահելու համար, աւելի աւազ էին պատում աւազ ու մատաղում և հասարակական գործերում աւելի ժիր ու անշահասէր էին գործերում և ոչ Թէ ապրուստ բարձրացնում»։—Նա հասկանալով որ այս ամէնը Թերի գիտութիւնից է, Թերի լուսաւորութիւնից է, ամէն տեսակ աշխատում էր օգնելու լուսաւորութեան գործին ու մինչև անգամ իւր վերջին կամքն ու ուշքն ուսման և կրթութեան վրայ դարձրած և այդ ցանկութիւններն էլ աւանդել է Նա իւր ժառանգներին։—Այս վերջին տարիները հանգուցեալը սիրով պարապած էր գիւղական անտեսութեամբ, իւր Թանկագին ժամանակի մէկ մասը Նրան էր նուիրած. բայց ափսոս, ժամանակն դեռ ևս չհասած վախճան եղաւ Նրա կեանքի և անկատար մնացին Նրա սրտի շատ ցանկութիւնները. Նրա վերջին ամենամեծ պատուէրը իւր որդկանց մնութիւն էր և հաստատմութիւն դէպի ազգային եկեղեցին. Նա հանգեաւ իրրև բարի քրիստոնեայ, ինչպէս լաւ հայ և խնամող հայր իւր զաւակաց. մի Ճչմարիտ հայ օջախի գլուխ մնաւ. Թիֆլիսը կորցրեց իւր ընտիր գործիչներից մէկին, քաղաքը իւր պատուաւոր քաղաքացուն Մեռաւ Ներքինի պատուաւոր հայրը, Թող Նրա զաւակները Նրա անունը անմահացնեն հետևելով Նրա օրինակին՝ իրրև լաւ հայ և ընտիր քաղաքացի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԽԱԼՔԱԼԱՔ, 28-ն յունուարի.—Ամեն կողմից լսում ենք մօրեխի, կարկուտի, մկան հարուածներին առած վնասները, որից գիւղացու ամբողջ տարուայ աշխատանքը փչանում է։ Իսկ Ախալքալաքը այս վերջին ութ տարուայ ընթացքում կործանուելու վրայ էր ցրտի և կարկտի առած վնասներից. եթէ չլինէր անցեալ տարուայ առատութիւնը, որը փրկութեան տարի էր մեր գաւառի համար։ Ներկայումս շատ գիւղերում ձմեռուայ վրայ հասնելուն պատճառով ցորենի և գարու դէզերը մնացել են չ'ձեռուած։ Մինչդեռ ամեն տեղ հայաշատիկներին սպառնող վտանգներն՝ մօրեխի, մկան առաջն առնելու մասին մեծ ուշադրութիւն է դարձնուում, քաղաքիս մօտ մի քանի գիւղերում գիւղացուն ապրուստն անդունդը գլորող մի նոր տեսակ երևոյթի առաջն առնելը մնացել է անուշադիր։ Խօսքս մի նոր տեսակ վաշխառուների մասին է, որոնք մի քանի տարուայ մէջ մի քանի գիւղերի վերջին ծայր ապրուստի տէր են հասցրել։ Ո՛չ յայտնի չէ քաղաքումս երկկուայ մանրավաճառը, որը վերջին ութ տարուայ ընթացքում հարստացել կարգին է կանգնած։ Ո՛չ յայտնի չէ այստեղ մի այլ անձ որը իւր գիւղական ժողովուրդը գերի է դարձրել իրեն նոր վաշխառական ձևով։ Աւելորդ չի լինիլ, եթէ մի երկու խօսքով բացատրեմ այդ վաշխառուական նոր սիստեմը։

Ամենքին յայտնի է մեր գիւղացիների անհեռատեսութիւնը։ Այսօր նա փորի հարկաւորութիւն ունի. իսկոյն գնումն է չիշեալ պարոններին, որոնց քսակը միշտ բաց է այդպիսիների համար, և այսօրուանից ծախսում է ևկող աշնանը ստանալիք ցորենը։ Նա ստանալիք ցորենի սոմարը (20 պուդը) տալիս է այժմեանից 7 րուբլով, (այս գինը, որքան հետևել ենք այս մի քանի տարուայ ընթացքում, միշտ նոյնն է մինչև այսօր էլ)։ Դարձս է աշունքը։ Գիւղացին մուրհակի համաձայն պարտաւոր է տալ պարոնին 20 պուդ ցորեն. իսկ եթէ անբերրիութեան պատճառով անկարող է վճարել, իսկոյն մուրհակը նորոգում է, և եթէ այդ աշնանը ցորենի սոմարը 14 ր. արժէ, գիւղացին պարտաւոր է կամ փորը 14 ր. վճարել, կամ սոմարը 7 րուբլու հաշուով պարտաւորւում է վճարել եկող աշնան 40 պ. ցորեն և այսպէս պարբերաբար առաջ է գնում խաղալիան խիստ հաշուապահական կանոնով։ Չէշտ է երևակայել Թէ այս վերջին ութ անբերքի տարիների ընթացքում գիւղացու պարտքը որքան հասած կը լինի։

Իսկ անցեալ տարուայ առատութիւնը ոչինչ փոփոխութիւն չարաւ սոյն մի քանի գիւղերում, որովհետև ամբողջ բերքը յիշեալ պարոնների չեմարանները դատարկուելուց զատ, դեռ էլի պարտքի մէջ անքում են գիւղացիները։

Շատ հաւանական է, որ հետզհետէ սոյն գիւղերի օրինակին հետևեն և շրջակայքի բազմաթիւ գիւղերը,—արդէն պատահել են օրինակներ,—որով հետևի՝ ապրուստի և փող, ապրուստի և խորամանկութիւն, անհետաստեսութիւն և անխոհեմութիւն միշտ պատրաստ են շփուել և միանալ միմեանց։

Մուկը և մօրեխը, կարկուտը և ցուրտը էլի տանելի են, որովհետև նրանք ամեն տարի չեն յայտնուում. բայց ինչպէս այս նոր յայտնուող միջոցների և մօրեխների առաջն առնել, որոնք աւելի վնասակար են քան առաջինները.—ահա մի խնդիր, որը արժանի է լուրջ ուշադրութեան։

Վերև ակնարկած պարոնները, Թէ՛ անձնասիրութեան գէմ մի կարծիք ունին, անշուշտ, շատ ու շատ պիտի վերաւորուին, մինչև իսկ սպառնան «Նոր-Դար»-ի Թղթակցին. բայց պիտի ասեմ ժողովուրդը աւելի մեր սրտին մօտ լինելով, նրան սպառնող վտանգները հեռացնելու համար, երկիւղ չունենք ճշմարտութիւն երևան հանելու. ուստի և այս անգամ չենք Թաղնում «Հակ-Հասան» անուան տակ, այլ ստորագրում ենք մեր իսկական անունը։

Ց. Քօսեանց.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ.— Նիկս-Բիչն այս օրերս Բրնսաուլում մի քաղաքական Ճառ խօսեց, որի մէջ յոյս յայտնեց, որ սպառլամենտը կարող է վերջացնել անպատկան ինքնավարութեան վերանորոգումները և այդ վերանորոգումները մտցնել Իրլանդիայում։ Այդ միջոցը, Ճառախօսն կարծիքով, ոչ Թէ միայն այն պարտաւորութեան կատարումը կը լինի, որ կառավարութիւնն առել է իւր վրայ, այլ և մինիստրական վերջին հինգ տարուայ քաղաքականութեան լոգիկական և անխուսափելի հետևանք։

ԴԵՐՄԱՆԻԱ.—Գերմանիան ներկայումս կատարելապէս զբաղուած է կրթական նոր օրէնքի խնդրով։ Գերմանական զանազան քաղաքներում ապատախօները, ազգային-ազատամիտները և ազատ պահպանողականները բազմաթիւ ժողովներ են կազմում, ուր խիստ վճիռներ են կայացնում տարրական ուսումնարանների մասին եղած նոր օրէնքի դէմ։ Այդ մտքով գրուած շատ յատակագրեր են ուղարկուում պրուսական լանդտագը։ Ընդհանրապէս շարժումը տարածուած է ամ-

---

—Այ, չյաջողուեց, ասաց Գրիգորը։—Եթէ կինը կենդանի մնար, անշուշտ նա կը պատմէր մեզ բոլորը։

—Ի հարկէ, պատասխանեց Առքստամը։—Բայց ինչպէ՞ս յաւելի տեսարան էր...

—Երևի երկար ժամանակ է նա քաղցած եղել։

—Անշուշտ, եթէ ոչ նա չէր մեռնել։

—Թաղցածութիւնը բոլորովին ուժասպառ էր արել. նա մինչև անգամ չէր կարողանում հացը ծամել։

Այսպէս խօսելով որսորդները դուրս եկան Քարանձաւ-Խրճիթից և դիմեցին դէպի Հին-Թաղլար գիւղը։

Երեկոյ էր. գիւղը մօտիկ էր։ Շուտով որսորդները հասան այնտեղ, բայց աւերակ գտան։ Գիւղի ծայրում մի երդիկից ծուխ էր բարձրանում։ Նրանք դիմեցին այն կողմը և ներս մտան։ Մի ալեզարդ ծերունի և մի երիտասարդ տղայ նստած էին կրակի շուրջը և լուռ տաքանում էին։

—Բարի երեկոյ, ասաց Առստամը։

—Աստուծոյ բարին, պատասխանեց ծերունին, նրան երկար դիտելուց յետոյ։

XI.

Հին-Թաղլար գիւղը գտնուում է Ղազախայ լեռների հարաւային սահմանների մօտ, Նրանից մօտ քառասուն վերստ հեռաւորութեամբ հոսում է Սրասխ գետը։ Գիւղի պերքը հայկական մեծ գիւղերի նման զառիվայր է, տները գետնափոր են. ունի մի հոյակապ եկեղեցի սրբատաշ քարերից շինած։ Հին-Թաղլարը ներկայումս մի փոքրիկ գիւղ է կազմում. մօտ 80 տարի սրբանից առաջ Հին-Թաղլարը կազմում էր մի մեծ և հարուստ գիւղ։ Այն ժամանակ, երբ ռուսաց զօրքը դեռ ոտք չէր դրել Հայաստան և Ղարաբաղը իւր խառն դրութեամբ մի քաոս էր ներկայացնում, երբ խաների ազդեցութիւնը մեծացել էր և մելիքները իրենց անմիարանութեամբ անկեալ դրութեան մէջ էին, այն ժամանակ հայկական բոլոր գիւղերը հանգստութիւն չունէին, իսկ Հին-Թաղլարը զարգացից մօտիկ լինելով յաճախակի ենթարկուում էր Ղարադաղի խաներից յարձակումների և մեծամեծ նեղութիւններ էր էր կրում։ Թաղլարեցիները տեսնելով, որ գանգատի տեղ չունին և իրենց տիրապետող խանը մինչև անգամ հալածում է իրենց, մտածեցին գաղթելով վերջ տալ այդ նեղութիւններին։ Թողած իրենց հայրենի գիւղը, հանգը, տունը, ամեն բան և հազար ու մի նեղութիւններ կրելով գնացին բնակութիւն հաստատեցին Դալալեան գիւղում՝ ապաւինելով Շուշի բերդին։ Ամբողջ տասն և երկու տարի այդտեղ մեծամեծ տանջանքներով ապրելուց յետոյ, վերջապէս, Թաղլարեցիները դիմեցին Հայկազն իշխան գեներալ Մատաթեանին, հպատակեցին նրան և նրանից բնակութեան տեղ խնդրեցին։ Իշխան Մատաթեանը Թաղլարեցիներին բերեց բնակեցրեց այժմեան Թաղլար գիւղի տեղը, որ այն ժամանակ երեք անից բաղկացած կամ անունով մի փոքրիկ գիւղ էր։ Թաղլարը այժմ էլ մեծ գիւղ է և կարելի է վարանդ ու Տիզակ գաւառներում ամենամեծը համարել։

Թաղլարեցոց գաղթելուց շատ տարիներ յետոյ Ղարադաղից մի քանի հայ ընտանիք եկան և բնակութիւն հաստատեցին Հին-Թաղլար աւերակ գիւղում։ Հին-Թաղլարը այժմ աւերակ չէ, նա այժմ 30—40 տուն բնակչով մի փոքրիկ գիւղ է կազմում։

(Կը շարունակուի)

բողջ Գերմանիայում, ուր եղիւղ են կրում, թէ Պրուսիայում ուսումնարանները հոգևորականութեանն են թողնում մի գուցէ նոյն հեռանքն ունենայ և մեզ գաշնակից պետութիւնների մէջ։

—Թէ կրթական նոր օրէնքը ոքան մեծ նշանակութիւն ունի մեծ քաղաքների և մանաւանդ Բեռլինի համար, երևում է արդէն այն բանից, որ Բեռլինի մագիստրատը որոշել է դադարեցնել առ ժամանակ քաղաքային նոր ուսումնարանների շինութիւնը, մինչև որ կրթական օրէնքն իւր վերջնական վճիռն ստանայ։

—Պարիզի «Figaro» լրագրի համբագրութիւնը Բեռլինի «Preis. Zeitung» լրագրի համբագիր և ազատախոհների յատնի պարագլուխ Ռիխտերին մի նամակ է գրել, որի մէջ վերջինիս կարծիքն է խնդրում երեք խնդիրների մասին, այն է՝ Էլզաս-Լոթարինգիան պէտք է պիջի՞, փոխանակի՞ն թէ պէտք է չեզոք կացուցանել։ Ռիխտերը պատասխանել է, որ 1871 թուին խաղաղութեան դաշն հաստատելու օրից իւր համար առհասարակ Էլզաս-Լոթարինգիայի խնդիրը գոյութիւն չունի։

—Գերմանական լրագիրները հաղորդում են, որ գաշնակցութեան խորհրդին մի օրինագիծ է առաջարկուած Էլզաս-Լոթարինգիան պաշարողական դրութեան մէջ հրատարակելու։ Օրինագիծ բովանդակութիւնը դեռ ևս գաղտնի է պահւում։

ԻՏԱԼԻԱ.—Հռոմում լուր է տարածուած, թէ խաալական արքայական զոյգը մտադիր է Անգլիա ուղևորուել։

—Միլանում այս օրերս ոստիկանութեան և անգործ մնացած բանուորների միջև բնդհարում տեղի ունեցաւ։ Բանուորները հաւաքուած էին համայնական ձրի սեղանատան առաջ և աղաղակում էին «Մենք գործ ենք ուզում և ոչ թէ ողորմութիւն»։ Ոստիկանութիւնը ամբոխը կարողացաւ ցրել միայն զէնքի ուժով, որի ժամանակ մի քանի մարդիկ վերաւորուեցին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՓԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրուարի։—Սենատն այսօր քննում է «Южный Край» լրագրի համբագիր Իւզեֆովիչի բողոքը Խարկովի դատական պալատի վճռի դէմ, որով նա 500 ր. տուգանքի կամ վեց ամիս բանտարկութեան է ենթարկուում Խարկովի համալսարանի պրոֆեսոր Կրելովի դէմ դիֆամացիա անելուն համար։ Որովհետև դատական պալատը խանգարել է 1213-րդ յօդուածը, ուստի սենատը վճիռը վերացրեց, գործը դադարեցնելով։

ԲԵՐԼԻՆ.—Չուտ երթալութիւն է, որ դատադրութիւն է բացուած. բայց ձեռբակալուած է բնդամենը 4 հոգի և ոչ թէ 60. բացայայտուած է, որ դատապիրները եղել են Բեռլինում, Համբուրգում և Կեօնիգսբերգում։ Ոստիկանութիւնը չարունակում է եռանդով հետախուզութիւն անել։

ՎԻՆՆԱ.—«Fremdenblatt»-ի ստացած տեղեկութիւններից երևում է, որ Կրակովի շրջանում հացահատիկի կարօտ են արդէն 23 համայնքներ. 1300 գիւղատնտեսներ այլ ևս սերմացու չունին գարնանացանի համար։ Կրակովի նահանգական վարչութիւնը կառավարութեանը խնդրամատոյց է լինում չարունակելու զինուորական հարուստ բաւեսական և վիսլայի հոսանքը կանոնաւորելու աշխատանքները, որպէս զի կարօտեալ բնակիչներին ապրուստի հասոյթ տրուի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

4 փետրուարի.

Լոնդոն 101,35, 100,90 101,35
Բեռլին 49,3⅝, 49,65 49,70
Պարիզ 40,12½ 40,05 40,12½
Վոլուխպերքալ . . . . . 8, 12 ր. կ. գն
Մաքս. կուպօն . . . . . 162½ ր. գն.
Ադծաթ . . . . . 1, 19 ր. — կ. գն
Բօրսային դէս . . . . . —6½ % գն
Պետակ. բանկի 5% տոմս.
1-ին շրջանի . . . 108½ ր. — կ. սակ.
2-րդ . . . . . 103 ր. 12 կ. սակ.
3-րդ . . . . . .
4-րդ . . . . . .
5-րդ . . . . . .
6-րդ . . . . . 102,⅝ ր. կ.
100 և 1000 ր. արևելեան փոխադրութեան 5% տոմսեր,
1-ին շրջանի. . . . . .
2-րդ . . . . . 102, - ր. կ. ծախ.
3-րդ . . . . . 102½ ր. կ. ծախ.
Առաջին 5% հնդքին փոխադրութեան տոմսեր . . . . . 235¾ — կ. սակ.
. . . . . 2-րդ 225 ր. — կ. սակ.
Երկրդ փոխ. Ազն. հոդ. բանկի . . . . . 200½ ր. — կ. ծախ.
5½% բհնաեր . . . . . ր. կ. սակ.
Թիֆ. քաղ. վարկի ընկեր. օբլեդ. . . . . կ. սակ.

Բորսայի տրամադրութիւնը՝ ֆոնդի կողմից խաղաղ է, բանկային տկցեանների կողմից՝ թոյլ։

Խմբագիրը—հրատարակիչ՝
ՍԳԱՆԴԱՐ ՍԳԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՑՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը յայտնում է իւ գիտութիւն, որ ընկերութեան հրատարակութիւններից կոմիսիայով կամ ապառիկ չեն ուղարկուում գաւառները ոչոքին, եսկ կանխիկ վճարով (ոչ պակաս 5ր. արժողութեամբ գնողին) զիջումն է լինում 20%, և հանապարհածախքը վճարում է վարչութիւնս։

Ընկերութեանս հրատարակութեամբ ծանուցի տակ են և չուտով լոյս կը տեսնեն։

1) Գաղափարական քահանայ. Գ. տպագրենկոյի.

2. Արարատեան հնդնակենսագրութիւնը.

3. Ընտանեքի յոյս. Աննենսկայա

4. Պարոնեանի չիշատակարանը.

Ընկ. օգտին տուած պարահանդէսից գոյացաւ մուտք 517 ր. ծախք՝ 238 ր. 20 կ., ծախքը մուտքից հանելով, մընաւմ է 278 ր. 80 կ. որից՝ 20 ր. ապառիկ։ Վարչութիւնս չնորհակալութիւն է յայտնում իշխանուհի Տ. Մ. Թումանեանին և բոլոր այն անձինքներին որոնք օգնեցին պարահանդէսի կատարելուն։

Վարչութիւնս խնդրում է ընկ. անդամ լինել ցանկացողներին յայտնել վաղօրօք, որպէս զի ընդունէ այդպիսիներին. հին անդամներից խնդրւում է անդամավճարը հասցնել վարչութեանս։

Համաձայն բարձրագոյնս հաստատեալ ԲԱԳՈՒԱՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ կանոնադրութեան 17 և 26-րդ յօդուածների՝ ներկայ փետրուարի 8-ին, շաբաթ օրը, երեկոյեան 6 ժամին՝ ուսումնարանական նոր շինութեան դահլիճներից մէկում՝ Բագում, կը կայանայ ընկերութեան տարեկան ընդհանուր ժողով, ուր կը քննուին անցեալ 1891 թ. դրամական հաշիւները, կը քննուի ու կը հաստատուի ներկայ 1892 թ. համար խորհրդի կազմած նախահաշիւը, կը վճռուին ընթացիկ գործերը և ապա կընարուին երեք տարի ժամանակով խորհրդի նոր անդամներ՝ ընկերութեան գործերը կառավարելու համար։

2—1.

ԵՐԿԹՈՒԼՈՒ ԵՐԹԵՒԿՈՒԹԻՒՆ

Մարդակիր գնացքներ Բաթումի և Թիֆլիսի միջև.

№ 1.

Բաթումից դուրս է գալիս... 9 ժ. 10 ր. գիշ.։
Թիֆլիս ժամանում է., 5 ժ. 50 ր. եր.։
Թիֆլիսից դուրս է գնում... 6 ժ. 50 ր. եր.։
Բաթում ժամանում է... 8 ժ. 15 ր. առ.

Խառն գնացքներ Թիֆլիսի և Գանձակի միջև.

№ 47

Թիֆլիսից դուրս է գնում... 9 ժ. 20 ր. եր.։
Գանձակ ժամանում է... 10 ժ. 10 ր. առ.։

№ 48

Գանձակից դուրս է գալիս... 7 ժ.
Թիֆլիս ժամանում է... 7 ժ. 30 ր. առ.։ 45 ր. առ.։
Թիֆլիս ժամանում է... 9 ժ. 52 ր. եր.։

№ 2

Թիֆլիսից դուրս է գնում... 9 ժ. 30 ր. առ.։
Բաթում ժամանում է... 9 ժ. 45 ր. եր.։

Պոստային դնացքներ Բաթումի և Բագուի միջև.

№ 3

Բաթումից դուրս է գալիս ...11 ժ.։ 52 ր. եր.։
Թիֆլիս ժամանում 12 ժ. 25 ր. եր.։
Թիֆլիսից դուրս է նում... 1 ժ.։ 20 ր. ցեր.։
Բագու հասնում է... 7 ժ. 30 ր. առ.

№ 4

Բագուից դուրս է գալիս... 11 ժ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցաւ ար է պարերի համար
կ տարելագործուած

ՀԵՐՈՓՈՆ

10 պիեսով
30 ՐՈՒԲ.

ԱՐԻՍՏՈՆ-ՕՐԳԱՆ

10 պիեսով 24 ՐՈՒԲ.
Կան մեծ բանակութեամբ պիեսներ
50-ական կոպ.

ՖԵՆԻԿՍ-ՕՐԳԱՆ

մետալական 10 պիեսով
32 ՐՈՒԲ.

ռանձին պիեսները 60-ական կոպ.

ՍՔՐԱՖԻՆ, նոր օրգան երեխաների համար 6 պիեսով 5 ՐՈՒԲ.

6-ից աւելի պիեսները 50-ական կոպ.

ՆՈՐՈՒԹԻՒՆ

Մ. ՆԿԿՆ և ՐԻՍՏՈՆ 6 պիեսով 8 ր 6-ից աւելի պիեսները 25-ական կ.

Կան մեծ քանակութեամբ նոր հրնարաձ մեխանիքական և ուրիշ նրաժչական գործիքներ և պարագաներ։

ՅՈՒԼԻՈՍ ՀԵՆՐԻԽ ՑԻՄՄԵՐՄԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՒ ԶԱՅՆԱԳՐԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՊՈ.

ՄՈՍԿՈՒԱ, կուզնեցկի կամուրջ, տուն Զախարինի.
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Ր. Մոյկայա, № 34 և 40.

Պատկերազարդ պրէյս-կուրանտն և հայնատերերի ցուցակը—ձրի։

(188. ա.) 15—15։

ՄԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ

որոնում է մի կահաւորուած

ՍԵՆԵԱԿ

Ծառայով և սամովարով։ Հասցէն թողնել «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՇԵՐԱՄԱՐՈՒԹԻՒՆ

Մոլտիֆայոյում, Կորսիկայում (Ֆրանսիայում)

Ի. ԱԼՕԻԶԻ ԵՒ ԸՆԿ.

Ներամի սերմ գնողներին խնդարհաբար խնդրում ենք դիմել ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՓԻՒԶԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇԵՐԱՄԱԲՈՒԾԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ։

Գումարով գնողները բարեհաճում են դիմել Կովկասեան փուռատնտեսական ընկերութեան անդամ պ. Վ. ՍՈՒԼԽՆՈՎԻՆ, Թիֆլիսում, Կուկիա, Ներկայ փողոց, տուն № 39

Պ. ԱԼՕԻԶԻ ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄԸ վաճառւում է 1, 3, 5, և 10 մսխալանոց արկղիկների մէջ. իւրաքանչիւր մսխալը 60 ական կոպ. հաշուելով։

Ի. Ալօիզի

Շերամի սերմի լաւ որակութեան համար երաշխաւորութիւնը կարող է լինել այն, որ 1890 թուին պարգևատրուած է պատուոյ վկայականով և Թուրքաստանում ցելլիուլեար շերամի սերմի պաշտօնական մատակարար է։

(101) 16—7.

Կ. Կ. ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՆԻՆԵՐԻ պահեստում

ԲԱԳՈՒ

Ճախւում են ԿԱԽԵԹԻ, ՄԱՏՐԱՍԻ և ԴԵՐԲԵՆԴԻ գինիներ հինը և նորը, թէ մեծ քանակութեամբ (տակառներով) և թէ շիշերով։

Գները չափաւոր են։

Ընդունւում են պատուէրներ Ռուսիայի, Կովկասի և Անդրկասպեան քաղաքներից։

Հասցէն. ГАКУ
СКЛАДЪ Кавказскихъ винъ
К. К. Меликъ Шахназарянца
(0—0—0) X - 16

1892
ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ
ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ը«ՀԱՆԴԻՍ»-ը կը հրատարակուի միևնոյն ծաւալով. աւելի ճոխ սիաապմակողմանի բովանդակութեամբ։ Բաժանորդագինն է Ռուսիայի համար 4 բուբլի, կանխիկ վճարելի։ Ցանկացողները կարող են դիմել ուղղակի խմբագրութեանս։ Հետևեալ հասցէով.

A la Rédaction de la Revue «Hantess»
A Wienne (Autriche)

Իսկ Թիֆլիսում և գաւառներէն կարող են դիմել պ. Յովակիմ Զաքարեանցին
Խմբագրութիւն՝ «Հանդէս Ամսօրեայ»-ի
(Խ.) 10 - 10.

Բացուած է «ԲԱԶՄԱՎԷՊ» ամսաթերթի բաժանորդագրութիւնն 1892 թուականին (Յիսներորդ տարի)

Բաժանորդագինն է տարեկան 10 ֆրանկ (4 ռուբլի) կանխավճար։ Բաժանորդ գրուել ուզողները կարող են ուղղակի առ մեզ դիմել հետևեալ հասցէիս

Rédaction de la Revue «BAZMAVEP»
Wenise (Italie) St Lazare

և կամ առ գործակալն մեր ը թ Տփխիս պ. Յովակիմ Զաքարեանցի։
Խմբագրութիւն «ԲԱԶՄԱՎԷՊ»-ի.
(Խ.) 10—8

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՒ ԱՅԼ ԵՐԳՔ ՀՈԳԵՒՈՐՔ

Պարզոյների և երգեցիկ խմբերի Համար։

Գինն է 10 կոպ.

Դիմել Գանձակ՝ զրաւաճառ

ՍԱՂԱՅ ՍԱՂԱՅԵԱՆՑԻՆ

10—10.

Дозволено цензурою. Тифлисъ 5 го Февраля 1892 г. Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ Гол. пр., домъ Читахова